

րութիւնը ընդհանրացնեմ բոլոր օճախներուն, փառքերուն, բոլոր դարերէն: Օգտակա՞ր: Անշո՛ւշտ: Թերեւս հոս է գաղտնիքին ակը այն մեծ անձնաւորութեանց, որոնք ստիպման տակ, իրենց տուրքերը կը սրցնեն: Խոփը քանի հերկէ, այնքան աւելի կը փայլի: ... Այդ յայտ ու ծածկուած տուրքերէն դուրս, ամէն գիւղապետ իր անձնական պատասխանատուութեան տակ, երաշխաւորն էր իր ժողովուրդին հաւատարմութեան: Ան յանձնառու եղած էր մատնանիչ ընել իշխանութեանց ամէն օտարական, ինչ ազգի ալ պատկանէր ասիկա: Աւելին՝ տեղեակ պահել կառավարութիւնը երիտասարդութեան հակումներէն, զէնքերու գործածութեան մէջ վատնուած եռանդէն, որսի պատրուակով նշանառութեան ընդարձակ մարզանքներէն ու սա ու ան վէճին առիթով ծագում առած ընտանեկան խռովքներէն, յուզումներէն: Մատնութի՞ւն: Բաւական բիրտ է բառը: Մեր հայրենիքին մէջ յանձնառութիւններուն յօժարողները պատժուեցան, կամայ-ակամայ մեղանշումներու համար: Թուրքերու ծովուն մէջ կութ մը շարժող ճահճատենդէն արիւնաքամ ու անօթութենէն զգետնուած սա խուժարանին, ժայռաստանին մէջ պոմպա չէր պատրաստուեր, ոչ ալ Երլտրզի վրայ քալելիք հայ Փետայիին զինավարժութեան մարզանքը կրնար ըլլալ աներեւոյթ ոգիներու ցուցմունքներուն տակ: Ըսի այս ամէնը, վասնզի Մաթիկ Մելիքխանեանի ձերբակալութեան մէջ բոլոր այս նկատումները մէյ-մէկ քիչ դեր մը ունեցան:

Կ'աւելցնեմ ուրիշներ:

Գիւղապետին չափ տէրտէրը:

Ասոր շուքին՝ վարժապետը:

Այս երկուքէն առաջինը՝ տեղական ապրանք:

Երկրորդը՝ միշտ ներածելի:

Այդ գիւղին մէջ ոչ ոք իր անունը գրելէն անդին հաճած էր անցնիլ տասը ձմեռ դպրոց երթալէ վերջն ալ, երբ ես մտայ իրենց մէջ: Տէրտէր ու վարժապետ գիւղապետին օգնականները կը համարուէին: Բայց աւելի Գի-